ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հունիսի 26-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/38»

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպիչների և բազմաֆունկցիոնալ սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 26.06.2020թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 26.06.2020թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

<<Հարգելի գործընկերներ,

Ունենալով փորձ ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապհովումները բանկային երաշխիքի տեսքով՝ այսինքն 10մլն. ՀՀ դրամ ավել պայմանագրի կնքում, խնդրում ենք տալ պարզաբանում: Եթե կազմակերպությունը հաղթող է ճանաչվում և պայմանագիրը կազմում է 10 մլն. ՀՀ դրամ և ավել, ապա 4-րդ և 5-րդ հավելվածների 5-րդ կետում, ըստ բանկային օրենսդրության, բանկի կողմից նշվում է բանկային երաշխիքի վերջնաժամկետը: Ընդունելի է արդյո՞ք Ձեր կազմակերպության կողմից այդպիսի բանկային երաշխիքի տարբերակը:

Կանխավ շնորհակալություն>>

Պարզաբանում

<<Ընդունելի է այն դեպքում, երբ բանկային երաշխիքում նշված վերջնաժամկետը հաշվարկված է հաշվի առնելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով այդ երաշխիքի գործողության ժամկետին ներկայացվող բոլոր պահանջները:>>

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: